

Ամփոփ հաշվետվություն

Արդարադատության նախարարության ներքին աուդիտի ստորաբաժանման
կողմից 2019 թվականին իրականացված աշխատանքների մասին

1. Աուդիտի տարեկան ծրագրով նախատեսված աուդիտի առաջադրանքների քանակի, այդ թվում՝ բարձր ռիսկային համարված առաջադրանքների քանակի վերաբերյալ տեղեկատվություն.

Աուդիտի տարեկան ծրագրով նախատեսված աուդիտի առաջադրանքների քանակի՝ 8, որից 4-ը բարձր ռիսկային:

2. 1-ին կետով ներկայացված առաջադրանքների մեկնարկի ժամկետների ուշացումների, չկատարված առաջադրանքների քանակի և դրանց պատճառների վերաբերյալ տեղեկատվություն.

Առաջադրանքների մեկնարկի էական ուշացումներ չեն եղել, չի կատարվել թվով 5 առաջադրանք՝ այլ չպլանավորված առաջադրանքներով և աշխատանքներով պայմանավորված:

3. Չպլանավորված առաջադրանքների իրականացման քանակի և դրանց իրականացման հիմնավորումների վերաբերյալ տեղեկատվություն՝ նշելով նման առաջադրանքների տեսակարար կշիռը ընդհանուր առաջադրանքներում.

Նախարարի համապատասխան հրամանների համաձայն կատարվել է 2 չպլանավորված առաջադրանք, որոնց տեսակարար կշիռը ընդհանուր առաջադրանքներում կազմում է 25 %:

4. 2019 թվականի ընթացքում իրականացված աուդիտի առաջադրանքների արդյունքում աուդիտորի կողմից ներկայացված առաջարկությունների /միջոցառումների/, այդ թվում՝ մարմնի ղեկավարի կողմից ընդունելի համարված առաջարկությունների քանակի և տրված հանձնարարականների, ինչպես նաև 80 և ավելի տոկոսով կատարված միջոցառումների ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն.

2019 թվականին իրականացված աուդիտի առաջադրանքների արդյունքում աուդիտորների կողմից ներկայացվել են 14 առաջարկություններ /միջոցառումներ/, այդ թվում ղեկավարության կողմից ընդունելի համարված:

5. 2018 թվականին իրականացված աուդիտի արդյունքներով բացահայտված այն ռիսկերի կամ խնդիրների վերաբերյալ տեղեկատվություն, որոնք շարունակել են առկա լինել նաև 2019 թվականի ընթացքում.

ա) Ներքին հսկողական համակարգի ցածր մակարդակ

բ) գնումների գործընթացի ոչ ճիշտ պլանավորում

6. Ամենախոշոր 3 առկա ռիսկերը և դրանց նկարագրերը.

ա) հաշվապահական հաշվառումը ՀՀ օրենսդրության պահանջներից շեղումներով վարում:

բ) գնումների գործընթացի ոչ ճիշտ պլանավորում

գ) աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարների հաշվարկման և վճարման հետ կապված խնդիրներ:

7. Աուդիտի ենթարկված միավորների ղեկավարների ու աշխատողների պատրաստակամության աստիճանը համագործակցելու աուդիտի խմբի հետ /անբավարար, ցածր, միջին, լավ գերազանց/.

Աուդիտի ենթարկված միավորների ղեկավարների ու աշխատակիցների պատրաստակամության աստիճանը համագործակցելու աուդիտի խմբի հետ գնահատվում է գերազանց:

8. Աուդիտի ենթարկված միավորների ղեկավարների ու աշխատողների կողմից խոչընդոտման դեպքեր.

Աուդիտի ենթարկված միավորների ղեկավարների ու աշխատողների կողմից խոչընդոտման դեպքեր չեն եղել:

9. Աուդիտի ստորաբաժանման աշխատանքային պայմանները /անբավարար, ցածր, միջին, լավ գերազանց/, մասնավորապես սենյակային, գույքային, համակարգչային և ֆինանսական /օրինակ՝ գործուղման ծախս/ պայմաններ:

Ներքին աուդիտի բաժինը կազմված է երեք հաստիքային միավորից՝ բաժնի պետ, գլխավոր մասնագետ և առաջատար մասնագետ: Թափուր է միայն առաջատար մասնագետի հաստիքը: Թափուր հաստիքի համալրման պարագայում կբարձրանա առաջադրանքների իրականացման արդյունավետությունը: